

## Հարց

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ԼՂՀ օրենքին համաձայն՝ ի՞նչ հերթականությամբ է վճարվում ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն ստանալու համար վճարը:

## Պատասխան

Ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն ստանալու համար հայցվող ռադիոհաճախականության (ռադիոհաճախականությունների տիրույթի որոշակի հատվածի) տրամադրման վճարի մեկ տոկոսը վճարվում է նախքան թույլտվության տրամադրումը, իսկ 99 տոկոսը՝ Կարգավորողի կողմից ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման մասին որոշումն ընդունելուց հետո՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում: